

Հաստատված է Խաչատուր Աբովյանի
անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2012 թվականի
սեպտեմբերի 20-ի նիստում
Ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

1. Կիրառման ոլորտ

Սույն հայեցակարգը նպատակաուղղված է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (այսուհետ՝ ՀՊՄՀ) կրթական գործունեության որակի բնագավառում համաեվրոպական և ՀՀ-ի որդեգրած կրթության զարգացման և որակի ապահովման (ՈԱ) քաղաքականության իրագործմանը: Այն սահմանում է ՀՊՄՀ-ում որակի ապահովման, հավաստման, մշտադիտարկման շրջանակը՝ ընդհանուր պահանջները և սկզբունքները, ինչպես նաև վերջինիս կազմակերպական համակարգը:

Սույն հայեցակարգը ՀՊՄՀ-ի կրթական գործունեության նորմատիվ ապահովման համակարգի մի մասն է: Այն ՀՊՄՀ-ում որակի ներբուհական ապահովման քաղաքականության հետ մեկտեղ հանդիսանում է բարձրագույն մասնագիտական կրթության որակի համակարգի նորմատիվ հիմնարար փաստաթուղթ:

2. Նորմատիվ հիմունքներ

2.1. Կարգը մշակված է հետևյալ գործող նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում (ԵԲԿՏ) բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղեցույցները,
- «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքը,
- ՀՀ-ում կրթության որակավորումների ազգային շրջանակը,
- «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքը,
- ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 959-Ն որոշմամբ հաստատված Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները,
- ՀՊՄՀ-ի կանոնադրությունը,
- ՀՊՄՀ-ի ռազմավարությունը,
- ՀՊՄՀ-ի գիտական խորհրդի որոշումները:

3. Ընդհանուր դրույթներ

Առաջնորդվելով Բոլոնիայի գործընթացի հիմնարար փաստաթղթերով, կրթական ծառայությունների արտաքին և ներքին շուկաներում գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման, ուսանողների և շրջանավարտների կրթության բարձր որակի ապահովման հիմնախնդիրներով՝ ՀՊՄՀ-ն որդեգրել է իր կրթական գործունեության և հասարակությանը կրթական ծառայությունների տրամադրման որակը, մրցունակությունը և գրավչությունն ապահովելու քաղաքականություն:

Կրթության որակը ՀՊՄՀ-ի կողմից դիտարկվում է ոչ միայն որպես **ռազմավարական նպատակ** գիտելիքահենք հասարակության ստեղծման և որակյալ կրթական ծառայությունների տրամադրման համար, այլև ներքին և արտաքին ազդակների և մրցակցային դաշտի պայմաններում՝ որպես **ռազմավարական միջոց** Համալսարանի գործունեությունը միջազգային ասպարեզում զարգացնելու և ՀՊՄՀ-ի գրավչությունը բարձրացնելու համար: Կրթության որակը տրամադրվող կրթական ծառայությունների համապատասխանությունն է բուհի առաքելությանը և որդեգրած ռազմավարական ծրագրին: ՀՊՄՀ-ն կարևորում է այնպիսի կրթական ծրագրերի և կրթական

ծառայությունների ստեղծումն ու տրամադրումը, որոնք ձևավորված են բավարարելու միջազգային, ազգային և հանրային կարիքները ՀՀ-ում և միջազգային մակարդակներում տնտեսության ու հանրության պահանջների փոփոխությունների կանխատեսմամբ:
ՀՊՄՀ-ի շահառուներն են՝

- պետությունը,
- հասարակությունը,
- ուսանողներն ու իրենց ծնողները,
- ակադեմիական հասարակությունը,
- գործատուները:

ՀՊՄՀ-ում որակի ապահովումն իրականացվում է Համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի կողմից մշակված **որակի** համակարգային կառավարման **քաղաքականության** միջոցով՝ համապատասխան աշխատանքների պլանավորմամբ, կազմակերպմամբ և իրագործմամբ:

ՀՊՄՀ-ում կրթական գործունեության որակի ապահովման, հավաստման և մշտադիտարկման աշխատանքներն իրականացվում են համակարգված, ընդգրկվում ինչպես կառավարման, մանկավարժական, կրթական գործունեության, այնպես էլ յուրաքանչյուր ստորաբաժանման գործունեության բնագավառ: Նրանցում տարբեր չափամասերով ընդգրկվում են Համալսարանի ողջ աշխատակազմը, ուսանողները, ինչպես նաև արտաքին շահագրգիռ կողմերը (առաջին հերթին գործատուները):

Բարձրագույն մանկավարժական կրթության (այսուհետ՝ ԲՄԿ) որակի ապահովման, հավաստման և մշտադիտարկման բնագավառում Համալսարանի գործունեության ընդհանուր նպատակներն են՝

- ապահովել կրթական ծրագրերի մասնագիտական չափորոշիչները,
- խրախուսել և ապահովել հետազոտական դասավանդումն ու ուսուցումը,
- ապահովել կրթական վերջնարդյունքների արդիականացումը, զարգացնել մասնագիտական և փոխանցելի կարողություններ՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան,

- ապահովել շնորհվող որակավորումների համապատասխանությունը Որակավորումների ազգային շրջանակին,
- ապահովել կրթական ծրագրերի գնահատման հավաստիությունը, արդյունավետությունը և թափանցիկությունը,
- բարելավել կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացները՝ խթանելով դասախոսների կողմից կրթական ծրագրերի գնահատումը փորձագիտական գնահատման և գործատուների հետադարձ կապի միջոցով,
- բարձրացնել դասավանդման և ուսուցման որակը՝ դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործման, նոր մանկավարժական մեթոդների և տեխնոլոգիաների, համակարգչային տեխնիկական միջոցների ներմուծման ճանապարհով,
- ստեղծել ուսուցման միջավայր և ռեսուրսներ՝ կրթական գործընթացը արդյունավետ կազմակերպելու նպատակով,
- հետադարձ կապի միջոցով արձագանքել շահառուներից ստացած դիտողություններին և առաջարկություններին՝ կրթական ծառայությունների և գործընթացների որակը բարելավելու նպատակով,
- ապահովել հետազոտության միջոցով գիտելիքի զարգացումը և կիրառելիությունը,
- ապահովել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի» պահանջները՝ շնորհվող որակավորումների որակը բարելավելու ուղղությամբ,
- բարձրացնել ՀՊՄՀ-ի՝ որպես ուսումնական կենտրոնի գրավչությունը՝ ապահովելով ուսանողների և դիմորդների համար մասնագիտական կրթության բարձր որակը,
- բարձրացնել ՀՊՄՀ-ի՝ որպես աշխատավայրի գրավչությունը՝ ապահովելու Համալսարանի պոտենցիալ և ներկայիս պրոֆեսորադասախոսական ու վարչական աշխատակազմի համար ուսումնական գործունեության կազմակերպման բարձր մակարդակ:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար ՀՊՄՀ-ն մշակում և ներդնում է որակի ապահովման և մշտադիտարկման գործուն ընթացակարգեր՝ Համալսարանի

առաքելությունն իրականացնելու և տրամադրվող կրթական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով իրատեսական և կշռադատված որոշումներ կայացնելու համար: ՀՊՄՀ –ն որակի ապահովման սեփական քաղաքականությունը կիրառելիս և սույն հայեցակարգի դրույթները մշակելիս առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- **Ընդգրկվածություն.** ՀՊՄՀ-ն կարևորում է բոլոր շահառու մարմինների ընդգրկվածությունը՝ որակի ապահովման գործընթացները բարելավելու համար: Մասնավորապես, կարևորվում է ՀՊՄՀ-ի ուսանողական մարմնի ներկայացուցիչների ներգրավվածությունը ՈԱ-ի հանձնաժողովներում և որակի ապահովման մշտադիտարկման գործընթացներում: Գիտական խորհրդին կից ՈԱ-ի ներկայացուցչական հանձնաժողովում, ՀՊՄՀ-ի մասնագիտական ներկայացուցիչների հետ մեկտեղ պարտադիր է ուսանողների, մասնագիտական առնչություն ունեցող արտաքին փորձագետների և գործատուների մասնակցությունը:
- **Հաշվետվողականություն և թափանցիկություն.** ՀՊՄՀ-ն կապահովի շահառուներին տրվող տեղեկատվության մատչելիությունը, ճշգրտությունը և կարևորությունը: ՀՊՄՀ-ի այժմյան գործող կայքը պարբերաբար կթարմացվի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությամբ: ՀՊՄՀ-ի ուսումնական գործընթացին ներգրավված բոլոր միավորները միաժամանակ կներկայացնեն տարեկան հաշվետվություն կատարված աշխատանքների մասին, որը կներկայացվի ՀՊՄՀ-ի պաշտոնական կայքում:
- **Թիմային մոտեցում.** ՀՊՄՀ-ում գործող որակի ապահովման համակարգը, ընթացակարգերը, մեխանիզմները հասանելի կլինեն ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչների դիտարկմանը, ուսումնասիրմանը և հետադարձ կապի ապահովմանը, որը կստեղծի ՀՊՄՀ-ում որակի ապահովման նկատմամբ գործընկերային և թիմային մոտեցման մթնոլորտ:
- **Արժեհամակարգի ստեղծում.** ՀՊՄՀ-ն համապատասխան միջոցառումներով և գործընթացներով կստեղծի որակի ապահովման արժեհամակարգ և մշակույթ, որը հետևողականորեն կիրագործվի Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում:

ԲՄԿ-ի որակի ապահովման բնագավառում ՀՊՄՀ-ի գործունեության կոնկրետ նպատակներն ու ուղղությունները /երկարաժամկետ և կարճաժամկետ/ հաստատվում են Համալսարանի գիտական խորհրդի կողմից և ամրագրվում բուհի ռազմավարության և զարգացման ծրագրերում:

Սույն Հայեցակարգի հիման վրա Համալսարանը մշակում է այլ նորմատիվ և նորմատիվ-մեթոդական ակտեր, որոնք ձևավորում են ԲՄԿ-ի որակի ապահովման բնագավառում բուհի աշխատանքի նորմատիվ բազան:

4. ՀՊՄՀ-ի առաքելությունը

ՀՊՄՀ-ն մասնագիտական խորը գիտելիքներով զինված բարձրորակ մանկավարժների պատրաստման և վերապատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություն է՝ մանկավարժամշակութային արժեքների հետևողական զարգացմամբ, որի առաքելությունը նպատակուղղված է՝

- մանկավարժական մտքի նորովի ձևավորմանը, կրթության և սոցիալական ոլորտի ժամանակակից մանկավարժ մասնագետների պատրաստմանը,
- Համալսարանի ներուժի զարգացմանը, կրթական գործունեության արդյունավետության և կրթության ու գիտության որակի բարձրացման շնորհիվ՝ շրջանավարտների մրցունակության բարձրացմանը,
- ուսուցիչների վերապատրաստման բազային կենտրոնի առաջնորդող դերի ապահովմանը և Համալսարանի հետազոտական հնարավորությունների զարգացմանը՝ աջակցելով ՀՀ կրթության համակարգի գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեությանը:

5. Որակի ապահովման գործընթացներ

Որակի ապահովման գործընթացների հիմքում ընկած են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում Որակի ապահովման չափորոշիչներն ու ուղենիշները և ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 959-Ն որոշմամբ հաստատված Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները:

Գործընթացները ներառում են՝

- որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում (ծրագրի մշակման արտոնում, ծրագրի իրականացման արտոնում, ծրագրի ընթացքի մշտադիտարկում, ծրագրի ամփոփիչ գնահատում և վերանայում),
- ուսանողների գնահատում (դիագնոստիկ, ընթացիկ և եզրափակիչ գնահատման համակարգ),
- պրոֆեսորադասախոսական համակազմի որակի ապահովում (դասախոսների գործունեության արդյունավետության փորձագիտական գնահատում, գնահատում ուսանողների կողմից, վարկանիշավորման և խրախուսման համակարգ),
- ուսումնական ռեսուրսներ և աջակցություն,
- տեղեկատվական համակարգեր,
- հանրային տեղեկատվություն:

6. ԲՄԿ-ի որակի ապահովման համակարգի ներհամալսարանական սուբյեկտները

5.1 ԲՄԿ-ի որակի ապահովման համակարգի ներդրումն ու համակարգումն իրականացվում է կազմակերպական կառավարման հետևյալ մակարդակներում՝ համահամալսարանական, գործառական- կառուցվածքային և ֆակուլտետային/ամբիոնային: Յուրաքանչյուր օղակ ապահովում է կառավարման հետևյալ ձևերը՝ վարչական, մասնագիտացված գործառական և մանկավարժական:

5.2 ԲՄԿ-ի *որակի ապահովման համահամալսարանական կառուցվածքի* մեջ ընդգրկվում են՝

- **ՀՊՄՀ-ի ռեկտորը.** պատասխանատու է համահամալսարանական որակի ապահովման քաղաքականության իրագործման համար:
- **ԲՄԿ-ի որակի ապահովման համակարգի ՀՊՄՀ-ում գիտական խորհրդին կից գործող ՈԱ-ի հանձնաժողով.** պատասխանատու է ՈԱ-ի քաղաքականության և հայեցակարգի բարելավմանն ուղղված առաջարկների ուսումնասիրության, կանոնակարգային, ընթացակարգային, չափորոշիչ- փաստաթղթերի և կրթական ծրագրերի վերանայման ու ներդրման քննարկման և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար: Սույն հանձնաժողովում ներկայացված են ՀՊՄՀ-ի ֆակուլտետների ղեկանները, առնվազն երկու առաջատար դասախոս, առնվազն երկու արտաքին փորձագետ, երկու ուսանող և գործատուների երկու ներկայացուցիչ: Հանձնաժողովի նախագահը ՀՊՄՀ-ի ռեկտորն է:

5.2.1 ԲՄԿ-ի որակի ապահովման գործառական կառուցվածքում ընդգրկված են.

- **Կրթության զարգացման և որակի ապահովման վարչությունը.** պատասխանատու է ՈԱ-ի քաղաքականության և հայեցակարգի իրագործման, ՈԱ գործընթացների մշտադիտարկման, վերանայման և բարելավման համար: Վարչությունը համագործակցում է ամբիոնային ՈԱ-ի պատասխանատուի, ՀՊՄՀ-ում ՈԱ հանձնաժողովի և ֆակուլտետների/ամբիոնների հանձնաժողովների հետ և հաշվետու է ՀՊՄՀ-ի ռեկտորին:

- ՈԱ-ի վերլուծության և վիճակագրության բաժինը հաշվետու է Կրթության զարգացման և որակի ապահովման վարչությանը և պատասխանատու է ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից տվյալների, ինքնագնահատման հաշվետվությունների հավաքագրման և վերլուծության համար: ՈԱ-ի վերլուծության և վիճակագրության բաժինը վերլուծված տեղեկատվությունը փոխանցում է Կրթության զարգացման և որակի ապահովման վարչությանը՝ ռազմավարական խնդիրների փոփոխությունների համակարգման և ՀՊՄՀ-ում ՈԱ հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

5.3 Ընդհանուր **Ֆակուլտետային/ամբիոնային** մակարդակով ԲՄԿ-ի **որակի ապահովման համակարգն** ընդգրկում է՝

- **ՀՊՄՀ-ում որակի կառավարման ֆակուլտետների/ամբիոնների հանձնաժողովներ.** պատասխանատու են ֆակուլտետում/ամբիոններում ուսուցման որակի և գործող ծրագրերի վերահսկման ու մշտադիտարկման, նոր ուսումնական ծրագրերի քննարկման, ՀՊՄՀ մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողություն ապահովելու համար: ՀՊՄՀ-ում որակի կառավարման ֆակուլտետների/ամբիոնների հանձնաժողովները կարող են, ըստ անհրաժեշտության, ստեղծել ենթահանձնաժողովներ՝ մասնագիտական տարբեր տիրույթներում խնդիրների քննարկման, առաջարկությունների ներկայացման, ինչպես նաև անհրաժեշտ ընթացակարգերի և կանոնակարգերի մշակման ու բարելավման համար: Սույն հանձնաժողովում ընդգրկվում են ՀՊՄՀ-ի ֆակուլտետների և ամբիոնների ղեկավարները:

- **Նպատակային հանձնաժողովներ.** պատասխանատու են ուսումնական ծրագրերի մասնագրերի (սպեցիֆիկատորների), պլանների, կրթական վերջնարդյունքների, անհրաժեշտ ընթացակարգերի, կանոնակարգերի մշակման, վերանայման և կատարելագործման համար: Նպատակային հանձնաժողովները կազմվում են ֆակուլտետային հանձնաժողովի կողմից՝ ընդգրկելով ուսանող, առաջատար դասախոս, գործատու և արտաքին փորձագետ:

- **Ամբիոնային ՈԱ-ի պատասխանատու.** պատասխանատու է ամբիոնի մակարդակով որակի ապահովման ու վերահսկման գործառույթների իրականացման և ամբիոնի կրթական ռազմավարությունից բխող նոր ուսումնական ծրագրերի ներդրման

գործընթացի կազմակերպման համար, համագործակցում է ՀՊՄՀ-ի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ տվյալների հավաքագրման և փոխանցման նպատակով:

Վերոնշյալ կառուցվածքային և կազմակերպական միավորներից բացի՝ ԲՄԿ-ի որակի ապահովման համակարգի կառավարման մեջ ներգրավված են ստորաբաժանումների այն բոլոր ղեկավարները (ղեկաններ, ամբիոնների վարիչներ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ), որոնք պատասխանատու են իրենց վերահսկման և կառավարման տիրույթում գտնվող գործունեության արդյունքների համար: ՈԱ-ի վերլուծության և վիճակագրության բաժնին են տրամադրում իրենց ստորաբաժանմանը առնչվող տվյալները և հաշվետվությունները՝ համապատասխան վերլուծություններ իրականացնելու նպատակով:

– Համալսարանի պրոռեկտորները համակարգում են ԲՄԿ-ն իրենց ենթակայության ուղղությունների շրջանակներում, ունեն պարտականություններ և իրենց մասով պատասխանատվություն են կրում Համալսարանում ԲՄԿ-ի իրականացման որակի համար:

– **Դասավանդման մակարդակում** որպես որակի ապահովող, մշտադիտարկող և վերահսկող սուբյեկտ՝ հանդես է գալիս ՀՊՄՀ-ի յուրաքանչյուր դասախոս:

Թվարկված սուբյեկտները (անհատական և կոլեգիալ առումով) կազմում են նաև ԲՄԿ-ի որակի համակարգի վերահսկող կազմը:

7. ԲՄԿ-ի որակի կառավարման սուբյեկտների հիմնական պարտականությունները

Համալսարանի բարձրագույն ղեկավարը՝ ռեկտորը, միաժամանակ հանդիսանում է նաև գիտական խորհրդին կից ՈԱ-ի հանձնաժողովի նախագահը: Նա.

- առաջնորդում է ՀՊՄՀ-ն՝ ապահովելով վերջինիս շարունակական զարգացումը և ՈԱ-ի առումով ռազմավարական ուղեգիծը.
- ապահովում է ՀՊՄՀ-ում ՈԱ-ի քաղաքականության, հայեցակարգի, ընթացակարգերի և գործընթացների առկայությունը և դրանց շարունակական բարելավումը.
- ապահովում է ՀՊՄՀ-ի առաքելության և ռազմավարական հիմնախնդիրների առկայությունը ՀՊՄՀ-ում ՈԱ-ի քաղաքականությունում և հայեցակարգում.

- ապահովում է ԲՄԿ-ի որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի իրագործումը.
- սահմանում է ԲՄԿ-ի որակի ապահովման ուղղությամբ Համալսարանում աշխատանքների կազմակերպման, ղեկավարման և ապահովման սկզբունքները.
- ապահովում է ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառնության և ընթացակարգային գործընթացները.;
- ստեղծում և ապահովում է պայմաններ, որոնք խթանում են Համալսարանի ողջ անձնակազմի և ուսանողների ներգրավումը ԲՄԿ-ի որակի համակարգի ներդրման աշխատանքներում:

Համալսարանի ֆակուլտետների ղեկանները.

Պատասխանատու են ՀՊՄՀ-ում ԲՄԿ-ի որակի ապահովման համար և անկախ իրենց պաշտոնեական պարտականություններից՝ ղեկավարության առաջ պատասխանատվություն են կրում իրենց ֆակուլտետային տիրույթում գտնվող ԲՄԿ-ի որակի համակարգի ապահովման պահանջների կատարման համար:

Ֆակուլտետի ղեկանը.

- պատասխանատու է իր մասնագիտական տիրույթում իրականացվող կրթական ծրագրերի մշակման և պատշաճ իրագործման համար.
- ապահովում է իր մասնագիտական տիրույթում գտնվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանությունը Որակավորումների ազգային շրջանակին.
- ապահովում է իր մասնագիտական տիրույթում գտնվող կրթական ծրագրերին առնչվող տեղեկատվության մատչելիությունը և հրապարակայնությունը.
- ամբիոնների վարիչների հետ համատեղ մշակում է ֆակուլտետի զարգացման ռազմավարական կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր.
- ապահովում է իր մասնագիտական տիրույթում գտնվող կրթական ծրագրերի համապատասխանությունը ֆակուլտետի ռազմավարական ծրագրի խնդիրներին.վերահսկում և համակարգում է ֆակուլտետի կողմից տրամադրվող ծառայությունների պատշաճ որակը.
- մասնակցում է կադրային ռեսուրսների համալրման քաղաքականության մշակմանը և վերջիններիս հավաքագրմանը, ինչպես նաև մշակում

պրոֆեսորադասախոսական համակազմի կատարելագործումը խթանող միջոցառումներ.

- միջնորդ է հանդիսանում ամբիոնների վարիչների ու ՈԱ-ի պատասխանատուների և ՀՊՄՀ-ի ղեկավարության ու Կրթության զարգացման և որակի ապահովման վարչության.
- համակարգում է իր ստորաբաժանման մակարդակով վարչական, գործառնական և այլ հատուկ աշխատանքները ՈԱ-ի ուղղությամբ.
- համագործակցում է իր մասնագիտական տիրույթում այլ բուհերի համապատասխան ստորաբաժանումների հետ՝ կրթական ծրագրերի բարելավման նպատակով.
- կազմակերպում և ապահովում է համագործակցությունը ինչպես իր ենթակայության ստորաբաժանման աշխատակազմի, այնպես էլ Համալսարանի այլ՝ արտաքին և ներքին շահառուների հետ:

Ամբիոնի վարիչը հաշվետու է ֆակուլտետի ղեկանին և ՀՊՄՀ-ի ռեկտորին/պրոռեկտորին և իրականացնում իր կրթական ծրագրերի ընդհանուր կառավարումը: Մասնավորապես՝

- իրականացնում է կրթական ծրագրի կազմակերպումը.
- ապահովում է կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը.
- ապահովում է կրթական ծրագրի վերջնարդյունքները և դրանց համապատասխանությունը Որակավորումների ազգային շրջանակին և կրթական ծրագրի մասնագրին.
- ակտիվորեն մասնակցում է որակի ապահովման գործընթացներին՝ հետադարձ կապ ուսանողների և դասախոսների կողմից իր կողմից կառավարվող կրթական ծրագրի վերաբերյալ, գնահատման համակարգի, դասավանդման և ուսուցման մեթոդաբանության, առկա ռեսուրսների, դասախոսական համակազմի պատրաստվածության վերաբերյալ.
- ապահովում է իր կրթական ծրագրի ներքո դասավանդող դասախոսների մասնագիտական աճը.
- մշակում է խրախուսական համակարգ՝ իր կրթական ծրագրի ներքո դասավանդող դասախոսների խրախուսման և առաջխաղացման նպատակով.

- ֆակուլտետի ղեկանին է ներկայացնում կրթական ծրագրի մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած խնդիրները և լավագույն փորձը.
- մշակում և ֆակուլտետի ղեկանին է ներկայացնում հիմնավորումներ և տեղեկատվություն նոր կրթական ծրագրի մշակման և իրագործման վերաբերյալ.
- ակտիվորեն մասնակցում է պարբերական և տարեկան մշտադիտարկումներին, կազմակերպում է կրթական ծրագրի ինքնազնահատման հաշվետվության պատրաստումը և կրթական ծրագրի արտաքին գնահատման աշխատանքները.
- կազմակերպում է աշխատանքային հանդիպումներ իր կրթական ծրագրի ներքո դասավանդող դասախոսական համակազմի և ուսանողների ներկայացուցիչների հետ՝ կրթական ծրագրի հետ առնչվող խնդիրները քննարկելու և լուսաբանելու նպատակով.
- մշակում է ժամանակացույց և նշանակում պատասխանատուներ դասալսումների, ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման, ուսանողների հետ քննարկումների միջոցով կրթական ծրագրի մշտադիտարկումը ապահովելու նպատակով:

Ամբիոնի ՈԱ-ի պատասխանատուն հաշվետու է ամբիոնի վարիչին և ֆակուլտետի ղեկանին և իրականացնում է ՈԱ-ի ապահովման անհրաժեշտ գործավարական ու գործառական աշխատանքներ: Ամբիոնի ՈԱ-ի պատասխանատուն նշանակվում է համապատասխան ֆակուլտետի ղեկանների կարգադրությամբ՝ ամբիոնի վարիչի ներկայացմամբ: Ամբիոնի ՈԱ-ի պատասխանատուն.

- տրամադրում է ամբիոնի վարիչին տեղեկատվական, մեթոդական, կազմակերպական օգնություն ԲՄԿ-ի որակի բնագավառում ամբիոնի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, գնահատման, մշտադիտարկման, վերլուծության հարցում, այդ թվում՝ նաև իրականացնում է ամբիոնի վարիչի կողմից հանձնարարված վերահսկման, կազմակերպական աշխատանքները,
- իրականացնում է շուկայավարական (մարքեթինգային) միջոցառումներ, պատասխանում բոլոր շահառուների հարցադրումներին.

- իրականացնում է տվյալ կրթական ծրագրով դասավանդող դասախոսական համակարգի գործունեության արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և գրանցումը.
- իրականացնում է ուսանողների վերաբերյալ տեղեկատվության գրանցումը՝ ներառյալ ուսանողների առաջադիմությունը, շարժունությունը, առաջխաղացումը և այլն.
- գրանցում և ամբիոնի վարիչին է ներկայացնում ուսումնական տարվա ընթացքում ուսանողներից և դասավանդող դասախոսական կազմից հետադարձ կապի միջոցով ստացված տեղեկատվությունը.
- կազմակերպում է կրթական ծրագրի արդյունավետության հետ կապված հետազոտություններ՝ արտաքին և ներքին շահառուների ներգրավմամբ.
- ամբիոնի վարիչի հետ մեկտեղ կազմակերպում և համակարգում է կրթական ծրագրի ինքնագնահատման աշխատանքները.
- ապահովում է առօրյա շփումը և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը կրթական ծրագրի շահառուներին:

Կրթության զարգացման և որակի ապահովման վարչությունը և ՈԱ-ի վերլուծության և վիճակագրության բաժինը հաշվետու են ՀՊՄՀ-ի ռեկտորին և.

- իրականացնում են ՀՊՄՀ-ում ԲՄԿ-ի որակի ապահովման պահանջների ձևակերպումը, մշակումը և ներդրումը.
- համակարգում են ՀՊՄՀ-ում որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի իրագործումը կառուցվածքային ստորաբաժանումների կողմից.
- կազմակերպում են ՀՊՄՀ-ում ՈԱ-ի ընթացակարգերի կիրառման և իրագործման վերաբերյալ մշտադիտարկում.
- համագործակցում են ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների հետ և հետադարձ կապի միջոցով վերանայում և բարելավում են ՀՊՄՀ-ում ՈԱ-ի քաղաքականությունը, հայեցակարգը և ՈԱ-ի ընթացակարգերը.
- կազմակերպում են լուսաբանման սեմինարներ և վերապատրաստումներ՝ ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներին ՈԱ-ի

քաղաքականության, հայեցակարգի, ընթացակարգերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկացնելու, կարողությունները հզորացնելու նպատակով.

– ՀՊՄՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից հավաքում և վերլուծում են ՀՊՄՀ-ում կրթական ծառայությունների և գործընթացների կազմակերպման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, կատարում քանակական և որակական վերլուծություններ.

– վերլուծությունների հիման վրա ֆակուլտետային հանձնաժողովի հետ մշակում համապատասխան առաջարկներ և ներկայացնում գիտական խորհրդին կից գործող ՈԱ-ի հանձնաժողովին՝ համապատասխան որոշումներ կայացնելու համար.

– ներկայացնում են հաշվետվություն ռեկտորին ՀՊՄՀ-ում ԲՄԿ-ի որակի համակարգի կենսագործունեության և այն կատարելագործելու վերաբերյալ.

- հետադարձ կապի միջոցով կազմակերպում են վարչության գործունեության արդյունավետության ուրույն ինքնագնահատում, վերլուծում արդյունքները և բարելավում վարչության գործունեության ընթացակարգերը և գործընթացները.

- կազմակերպում են ԲՄԿ-ի որակի համահամալսարանական ներքին փորձագիտություն և դրա արդյունքների հիման վրա ֆակուլտետային հանձնաժողովի հետ մշակում միջոցառումների ծրագիր՝ որակը բարձրացնելու նպատակով.

- կազմակերպում են այլ բուհերի հետ փորձի փոխանակում ՈԱ-ի շրջանակներում գործունեության խնդիրների վերաբերյալ.

- հավաքում և ամփոփում են կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած ինքնագնահատման տարեկան հաշվետվությունները և ներկայացնում ՀՊՄՀ-ի ռեկտորին:

ԲՄԿ-ի որակի ապահովման ՀՊՄՀ-ի գիտական խորհրդին կից ՈԱ-ի հանձնաժողովը (այսուհետ՝ ՈԱ հանձնաժողով) ՀՊՄՀ-ում ԲՄԿ-ի որակի համակարգի բարձրագույն համակարգող –խորհրդատվական և փորձագիտական կոլեգիալ մարմին է: ՈԱ-ի հանձնաժողովը գործում է՝ աջակցելու ՀՊՄՀ-ի ղեկավարությանը, ինչպես նաև Համալսարանի գիտական խորհրդին՝ ԲՄԿ-ի որակի համակարգի հետ կապված խնդիրների լուծման համար: Համալսարանի ԲՄԿ-ի ՈԱ-ի հանձնաժողովի ձևավորման և գործունեության մասին կարգը սահմանվում է Համալսարանի կողմից մշակված դրա մասին Կարգով:

Համալսարանի ՈԱ-ի հանձնաժողովը կհավաքվի տարեկան մեկ անգամ և .

- կուսումնասիրի կրթական ծրագրի իրագործման կանոնակարգերը՝ ներառյալ գնահատումն ու դասավանդման մեթոդաբանությունը և կրթական ծրագրի զարգացումը՝ համաձայն ՀՊՄՀ-ի որդեգրած քաղաքականության և ընթացակարգերի.
- փաստաթղթերի և տարեկան հաշվետվությունների ուսումնասիրության հիման վրա կիրականացնի ՀՊՄՀ-ում ՈԱ-ի ընթացակարգերի իրագործման պարբերական մշտադիտարկում.
- կապահովի ուսանողներին տրամադրվող աջակցության և ծառայությունների պատշաճ որակը.
- կքննարկի և կմշակի ուղենիշներ՝ ՀՊՄՀ-ում հետազոտության զարգացման և ուսանողներին հետազոտական աշխատանքներում առավել արդյունավետ ներգրավման համար.
- կծանոթանա ՀՊՄՀ-ում ՈԱ-ի քաղաքականության և հայեցակարգի իրականացման մանրամասներին,
- կքննարկի ՀՊՄՀ-ի կրթության զարգացման և որակի ապահովման վարչության ներկայացրած ինքնագնահատման ամփոփ հաշվետվությունը և կհաստատի այն.
- կքննարկի Կրթության զարգացման և որակի ապահովման վարչության ներկայացրած առաջարկները և դիտողությունները՝ ՀՊՄՀ-ում ՈԱ-ի համակարգը բարելավելու նպատակով.
- կուսումնասիրի ՀՊՄՀ-ում ՈԱ-ի ֆակուլտետային հանձնաժողովի կողմից ներկայացված նոր կրթական ծրագրերի և/կամ գործող կրթական ծրագրերի վերաբերյալ առաջարկները.
- կկայացնի համապատասխան որոշումներ ՀՊՄՀ-ում ՈԱ-ի գործընթացները բարելավելու/կատարելագործելու ուղղությամբ.
- կքննարկի և կհաստատի կրթության զարգացման և որակի ապահովման վարչության կողմից ներկայացրած ընթացակարգերը և կանոնակարգերը.
- կքննարկի և կրթության զարգացման և որակի ապահովման վարչությանը կներկայացնի առաջարկություններ ՀՊՄՀ-ում ՈԱ-ի հետագա բարելավման ուղղությունների վերաբերյալ, ինչպես նաև ֆակուլտետային հանձնաժողովին տրված կրթական ծրագրերի և կրթական գործընթացի կազմակերպման վերաբերյալ հանձնարարականները:

Ֆակուլտետային որակի ապահովման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է դրանց նկատմամբ պահանջներով, որոնք մշակվում են Համալսարանի ԲՄԿ-ի որակի համակարգի փաստաթղթերի ձևակերպման շրջանակներում: Հանձնաժողովը հաշվետու է ՀՊՄՀ-ի ռեկտորին և ՈԱ-ի հանձնաժողովին, ինչպես նաև հաշվետվություններ է ներկայացնում Որակի զարգացման և կատարելագործման վարչություն կատարած աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ:

Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

- ֆակուլտետի պլանային գնահատման և որակի մշտադիտարկման պարբերական իրականացում,
- ֆակուլտետի՝ որակի անհամապատասխանության պատճառները և դրանց վերացման առաջարկությունների պատրաստումը,
- ֆակուլտետների կատարելագործման վերաբերյալ առաջարկներ,
- ֆակուլտետների որակի համար միջոցառումների ծրագրի մշակման կազմակերպում,
- ԲՄԿ-ի որակի վերահսկմանն առնչվող հարցերի նախնական մշակում և քննարկում,
- ֆակուլտետների խորհրդի որոշումների իրականացման կազմակերպում և վերահսկում,
- ֆակուլտետների որակի վերահսկմանն ուղղված կարգավորող միջոցառումների անցկացման կազմակերպում,
- ԲՄԿ-ի որակի բնագավառում ֆակուլտետի աշխատանքի մասին տարեկան հաշվետվության քննարկում և ներկայացում:

Ուսանողական մարմնի ներկայացուցիչ

Յուրաքանչյուր ուսումնական տարի յուրաքանչյուր ֆակուլտետում ներգրավված ուսանողները ընտրում են մեկ ուսանող՝ իրենց տեսակետները ֆակուլտետային ՈԱ-ի հանձնաժողովում ներկայացնելու և խնդիրները բարձրացնելու, ինչպես նաև նպատակային հանձնաժողովներում ընդգրկվելու և տարբեր խնդիրների լուծմանը մասնակցելու նպատակով: Ֆակուլտետային հանձնաժողովի առաջադրմամբ ընտրված ուսանողներից երկուսն ընդգրկվում են գիտական խորհրդին կից ՈԱ-ի

հանձնաժողովում: Սույն համակարգն ունի ռոտացիոն բնույթ, և յուրաքանչյուր տարի ընտրվում են տարբեր ուսանողներ՝ հանձնաժողովներում ներգրավվելու նպատակով:

Այլ դրույթներ

Սույն հայեցակարգը ենթակա է վերանայման և բարելավման՝ հիմք ընդունելով հետադարձ կապի միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը: Սույն հայեցակարգի իրագործման վերահսկողությունն իրականացնում է ՀՊՄՀ-ի ռեկտորը, իսկ համակարգումը՝ Կրթության զարգացման և որակի ապահովման վարչության ղեկավարը: